«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ռազմահայրենասիրական դաստիրակության հիմնախնդրի լուծման ուղիներն ու միջոցները հիմնական դպրոցում
ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	Հրայր Վարդանյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Երևանի Ջ. Աբրահամյանի անվան h111 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

Գլուխ 1 _____ 5

Գլուխ 2 _____ 13

Եզրակացություն _____ 22

Օտագործված գրականության ցանկ _____ 24

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասի պատճառով...

Հայրենապաշտական դաստիարակություն. ահա՛ մեր փրկության խարիսխը...

Գարեգին Նժդեհ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը՝ Սովորողի հայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ գտնվել և գտնվում է դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ դպրոցական ուսումնառության գործընթացը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտի մոտ հայրենիքի հանդեպ պատկերացումներ և սեր արմատավորելու, ազգային ինքնագիտակցություն ձևավորելու, հայրենիքի պաշտպան դաստիարակելու գործում: Հանրակրթության պետական կրթական չափորոշիչով պայմանավորված՝ հստակ պահանջներ են ներկայացված սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար, որի բաղկացուցիչ մասն են կազմում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության, ազգային հոգևոր արժեքների գնահատման սկզբունքները: Հայրենասիրության ժամանակակից ընկալումը բնութագրվում է ոչ միօրինակությամբ: Շատ բանում այն բացատրվում է տվյալ երևույթի բարդ բնույթով, նրա բովանդակության բազմակողմանիությամբ և արտահայտման ձևերի բազմազանությամբ; Դա պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակով, աշխարաքաղաքական դիրքով, Ադրբեջանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բնույթով, շուկայական հարաբերություններով: Այսօր առկա պատերազմական իրողությունից ելնելով դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է դիտարկել որպես անհրաժեշտություն: Դիտարկելով նշված պայմանները՝ պետք է ռազմահայրենասիրական խնդիրներին նոր լուծումներ և ուղիներ առաջադրել: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակը հոգեպես և ֆիզիկապես

ամուր սերունդ դաստիարակելն է: Հենց դպրոցից է ձևավորվում գրագետ և հայրենասեր զինվորը, իսկ արդեն բանակում նա կատարելագործվում է և հղկվում: Հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները այսօր նոր լուծումներ, նոր մոտեցումներ են պահանջում: Ժամանակակից հասարակության մեջ նկատվում է ազգային արժեքների, մշակույթի, հայրենասիրական գաղափարների նկատմամբ անտարբերություն, դրանց անտեսում, քաղաքացիական դիրքորոշման պակաս: Ուստի կարևոր է, թե ինչպիսի սոցյալ-մշակույթային քաղաքականություն է վարում պետությունը, ինչպիսին է կրթական համակարգի բովանդակությունը, քանի որ դրանով է պայմանավորված ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու հաջողությունը, ազգային վերածնունդը:

Հետազոտության նպատակը՝

ա) ուսումնասիրել սովորողների հայրենասիրության ձևավորման նախադրյալները,

բ) ուսումնասիրել հայրենասիրության ընկալումը տարբեր տարիքում

գ) տարբեր արդյունավետ միջոցներով սովորողների մոտ ձևավորել նվիրվածություն, հայրենասիրություն

դ) սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնել մեր պատմական հերոսական անցյալի և նորօրյա հերոսների, սխրագործությունների ու հայրենասիրության մասին:

Հետազոտության խնդիրն է՝

ա) տալ բարոյական կատեգորիայի հասկացությունը

բ) պարզել, թե սովորողը ինչ է հասկանում հայրենասիրություն ասելով

գ) բացահայտել այն պատճառները, դաստիարակության ներգործությունները, որոնք սովորողների մոտ ձևավորում են հայրենասիրություն:

ԳԼՈՒԽ -1

Ռազմահայրենասրիական դաստիարակության բովանդակությունը և հիմնախնդիրները հիմնական դպրոցում.

Ազգային արժեհամակարգի կրող երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում: Հայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ: Նրա նպատակները հասանելի են դառնում ընտանիքի, դպրոցի, հասարակական կազմակերպությունների, ուժային գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների, պատերազմի վետերանների համատեղ ջանքերի միջոցով: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բնութագրվում է հատուկ ուղղվածությամբ, հայրենիքին ծառայելու նկատմամբ յուրաքանչյուր քաղաքացու կողմից սեփական դերը և տեղը խորը գիտակցելով, զինծառայության պահանջները կատարելու նկատմամբ անհատական բարձր պատասխանատվությամբ: Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով ընդհանուր դաստիարակչական գործնթացի մի մասը, ուսումնականհաստատության համակարգված և նպատակաուղղված գործունեությունն է՝ կապված սովորողների մոտ բարձր հայրենասիրական գիտակցության, սեփական հայրենիքի նկատմամբ հավատարմությամբ, ի շահ ծննդավայրի՝ պետական պարտքը և սահմանադրական պարտականությունները կատարելու պատրաստակամության, հայրենիքի նկատմամբ հպարտության ձևավորման հետ: Հարցումների ընթացքում պարզվել է, որ հանրակրթական դպրոցներն ահռելի անելիքներ ունեն ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: Դպրոցներում առաջնային խնդիրներից են՝ աշակերտների հայրենիքի նկատմամբ անմնացորդ նվիրվածության, ՀՀ

զինված ուժերում ծառայելու նկատմամբ լարվածության և վախի հաղթահարման, ֆիզիկական ու հոգեբանական պատրաստվածության նպաստելը, միաժամանակ նրանց մեջ հետաքրքրություն առաջացնելով ռազմական գիտելիքների, ռազմական մասնագիտությունների հանդեպ: Այս ամենը պետք է իրականացնել նախապատրաստական և դաստիարակչական ինքնատիպ աշխատանքներով՝ զերծ պահելով նրանց փողոցային արատավոր բարքերից:

Հայ զինվորն այսօր արդեն լավ է հասկանում, որ միայն որակյալ ուսուցմամբ կարող է հակառակորդի նկատմամբ պահպանել գերա զանցությունը: Զենք ու ռազմական տեխնիկա ունենալը դեռ քիչ է: Պետք է ունենալ նաև դրանք շահագործող բարձրակարգ մասնա գետներ, և հենց այս գիտակցությամբ էլ հայ զինծառայողները պետք է սովորեն ու կատարելագործեն իրենց գիտելիքները: Այստեղ կարևորագույն դեր ու նշանակություն է տրվում մանկավարժի մասնագիտությանը՝ հատկապես զինղեկին, հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության ուսուցիչներին, դպրոցի հոգեբանին: Ուսուցիչների մանկավարժական հմտությունները, յուրաքանչյուր երեխայի նկատմամբ նրանց առանձնահատուկ վերաբերմունքը, անաչառ ու սրտացավ աշխատանքն էլ հանդիսանում են այս գործի հաջողության լուրջ գրավականը: Մասնավորապես, զինղեկը պետք է գիտակցի գործի կարևորությունը, լինի իրական հայրենասիրության ջատագովը, կարողանա հմուտ ու արդյունավետ կազմակերպել ռազմահայրենասիրական աշխատանքները: Զինղեկի արտադպրոցական և արտադասարանային աշխատանքները աշակերտներին հայրենիքի պաշտպանությանը պատրաստելու անհրաժեշտ և անքակտելի մասն են: Փորձը ցույց է տալիս, որ արտաժամյա բազմաթիվ միջոցառումները հաճախ ավելի արդյունավետ են աշակերտների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերում:

Դրանցից ամենահիմնականը ռազմագիտության, ֆիզկուլտուրայի, պատմության, աշխարագրության և գրականության դասերին մեր խնդրո առարկայի առումով նպատակաուղղված գործունեություն ծավալելն է: Այստեղ հատկապես կարևորենք նախնական զինվորական պատրաստության դերն այդ գործում: Չէ որ ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակը միայն ռազմագիտական գիտելիքներ հաղորդելն չէ: Այն այսոր նպատակ ունի լուծելու հրատապ դարձած մի

խնդիր ևս՝ պատանիներին հոգեբանորեն պատրաստել զինվորական ծառայության: Եթե չի լուծվում այդ խնդիրը, ապա դժվարանում է զինծառայության պայմաններին նորակոչիկների հարմարվելը: Դպրոցականների բանակում ծառայելու պատրաստվածության աստիճանը ռազմագիտության դասերին, ռազմագիտական գիտելիքներ հաղորդելուն զուգահեռ, պետկ է աշխակերտներին տեղեկատվություն տրվի զինվորական ծառայության վերաբերյալ, թե ինչ օբյեկտիվ հանգամանքներ կան բանակում, որոնց պետք է հարմարվի նորակոչիկը: Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է դարձնել պետական անխափան համակարգ: Բոլոր հանրակրդական հիմանարկներում նպատակահարմար կլինի, որ գործեն պատանիների նախազորակոչային պատրաստության համալիրներ: Լուրջ աշխատանքներ պետք է տարվեն պատանիների և երիտասարդության ռազմահայրենասիրական ոգու դաստիարակության ուղղությամբ՝ քարոզչություն անելով պետական խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի, օրհներգի պաշտամունքի վերաբերյալ: Այսպիսով ռազմահայրենասիրական դաստիարակությունըուղիղ համեմատական կախվածության մեջ է պետական և ազգային քաղաքականությունից, պետության վերաբերմունքից ու գնահատականից: Թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական պայմաններում մատաղ սերունդը պետք է ունենա կուռ գաղափարական հենք: Գաղափարական հենքը պատանու համար որոշակի է դարձնում սեփականառաքելությունը, առավել իմաստավորում իր՝ հայրենիքի պաշտպանի, կարգավիճակը: Հիմավորված է, որ ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի գործառնությունը, արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական գործնթացի սկզբմունքների ճիշտ ընտրության՝ նպատակաուղղվածություն, լավատեսական վերաբերմունք, գիտակցականություն և ակտիվություն, մանկավարժահոգեբանական արանձնահատկությունների հաշվառում, կոլեկտիվ դաստիարակություն:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու

բնավորության գիծ: Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք դաստիարակության պրոցեսում, և գալիս է մի պահ, որ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով: Հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս պետքէ նկատի ունենալ ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, սերտ կապ ստեղծել պաշտպանական մարզատեխնիկական կազմակերպության խորհրդի, զորամասերի, հիմնարկ-ձեռնարկությունների, վետերանների խորհուրդների և ծնողների հետ:

Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

1. Դպրոցականների մեջ զարգացնել հայրենասիրության գաղափարը, գիտակցված պատկերացում տալ հայրենասիրության մասին:

2. Ծանոթացնել մեր հարենիքի հերոսական անցյալին, հայ ժողովրդի փառավոր մարտական, աշխատանքային ավանդույթներին (Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի հերոսամարտեր):

3. Սեր ու հարգանք ներշնչել զինված ուժերի, մարտական ռազմական աշխատանքի նկատմամբ, ճիշտ ըմբռնել Զինված ուժերի դերը՝ որպես հայ ազգի և հայպետականության միակ երաշխավորի:

4. Դպրոցականների մեջ ձևավորել այնպիսի բարոյահոգեբանական բարձր որակներ, ինչպիսիք են՝ քաջություն, կարգապահություն, պատրաստ լինել սխրագործության, մշտական պատրաստակամություն, հավատ ուժի նկատմամբ:

5. Աշակերտների մեջ դաստիարակել կենդանի հետաքրքրություն ռազմական գործի նկատմամբ, ձգտում ուսումնասիրելու և տիրապետելու ռազմական մասնագիտություններ:

6. Դպրոցականներին ֆիզիկապես կատարելագործել ու կոփել, զարգացնել ուժ, դիմացկունություն, հնարամտություն և այլն:

7. Երեխաներին ներգրավել հետևյալ աշխատանքներում՝ զբաղվել ընթերցանությամբ, քննարկել ռազմագեղարվեստական, արկածային գրականություն, դիտել և վերլուծել ռազմահայրենասիրական թեմաներով գեղարվեստական ու վավերագրական կինոնկարներ:

8. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը պահանջում է նպատակասլացություն և հաստատակամություն ամբողջ հասարակայնության և հատկապես դպրոցնե րի մանկավարժական կոլեկտիվների ուշադրությունը հրավիրելով այդ գործի վրա

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութականմշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:

Դպրոց- բանակ կապում կարևորվում է նաև գաղափարախոսական միասնության ապահովումը, ինչին մեծապես նպաստում են փոխադարձ տեղեկատվական, քաղաքական, հասարակական տեսակետների ընդհանուր հաղորդակցության, կրթության ու հայրենիքի պաշտպանության խնդիրների զարգացման միասնական մոտեցումները:

Վաղվա զինվորը կրթվում և դաստիարակվում է դպրոցում, ահա որտեղից է սկսվում բանակը: Նշանակում է, որ այս 2 օղակները պարտավոր են աշխատել համագործակցված: Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ եղել է դպրոցի ուշադրության կենտրոնում: Դպրոցը միշտ պետք է հետևի իր սաների մոտ ռազմահայրենասիրական գաղափարներ ձևավորելու գործընթացին, սակայն այսօր դա այնքան էլ չի իրականացվում:

Կարևորվում է զինղեկի համագործակցությունը հայոց լեզվի և պատմության ուսուցիչների հետ՝ առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն իրադարձությունները, մեր ազգի հերոսների գործունեությունը, կազմակերպելով այցելություններ պատմական հիշարժան վայրեր, հուշարձանների մոտ՝ ներկայացնելով

հերոսների անցած փառավոր ուղին, ծաղիկներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով: Յուրաքանչյուր աշակերտի պետք է ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը: Հայ զինվորը պետք է հպարտությամբ հիշի, որ ինքն ու իր ընկերները հաջողությամբ են պահպանելու հայրենիքի խաղաղությունն ու անդորրը:

Սովորողների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ապագա ուսուցիչների նախապատրաստման տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակման համար ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է այնպիսի մոտեցում, որը հաշվի է առնում ժամանակակից մանկավարժության նվաճումները և դաստիարակչական աշխատանքի դիտարկվող ուղղության առանձնահատկությունները: Այդպիսի մոտեցում, մեր կարծիքով, հանդիսանում է ինտեգրատիվ-գործնական մոտեցումը, որ դասվում է մեթոդաբանության կոնկրետ-գիտական մակարդակի շարքում:

Սովորողների հայրենասիրական դաստիարակության և բարձր պատասխանատվության ձևավորման համար շատ կարևոր են հետևյալ նախապայմանները.

1. ձևավորել գիտակցական մոտեցում հայրենիքի, նրա անցյալի, ներկայի և ապագայի հանդեպ՝ պատմական և ազգային արժեքների հիման վրա,
2. սովորողների մեջ զարգացնել ազգային ինքնագիտակցությունը,
3. ձևավորել հայրենասիրական ոգի, զարգացնել հայրենիքի նկատ մամբ հպարտության, մեր լինելիության, գոյի անբեկանելի հավատ,
4. զարգացնել և խորացնել հայրենի երկրի պատմությունն ու ավանդույթները,
5. ինֆորմատիկայի դասերին յուրաքանչյուր սովորողի համար ակտիվ մոտեցման միջոցով պայմաններ ստեղծել քաղաքացիական նկարագրի ձևավորման տեսանկյունից.
6. ապահովել կազմակերպչամեթոդական աշխատանքներ,
7. իրականացնել ընտրություն ուսուցման օպտիմալ ձևերի և աշխատելու մեթոդների միջև, գործածել նորարարական տեխնոլոգիաները,
8. զարգացնել իրավական դաշտը ինֆորմատիկայի դասերի միջոցով, • սովորողների մոտ ձևավորել ակտիվ կյանքի դիրքորոշում,
9. սովորողների մեջ ձևավորել առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը:

Վերոհիշյալ խնդիրների իրականացումը պետք է ծավալել հետևյալ հիմնական ուղղություններով՝

Սերնդային կամ պատմական կապը, այսինքն՝ զարգացնել սովորողների գիտակցությունը հայրենիքի ճակատագրի ձևավորման, կերտման մեջ նրա անցյալի, ներկայի, ապագայի դիտակետից: Ներկա սերնդին զինել հպարտությամբ մեր դարավոր երթի նկատմամբ: Կարևոր նախապայման է պատասխանատվության զարգացումը: Այսինքն՝ ինֆորմատիկայի ուսուցման ընթացքում հայրենասիրական դաստիարակությունն ընդգկում է հայրենիքի բազմադարյան պատմության ուսումնասիրությունը, Հայաստանի տեղը և դերը համաշխարհային պատմության մեջ, նրա մտածելակերպի, սովորույթների և ավանդույթների, հերոսական անցյալի իմացություն:

Իրավական՝ անձի իրավական ուղղվածության ձևավորումը, կյանքի ակտիվ դիրքորոշումը: Սահմանադրական պարտքի խորը հասկացության ձևավորումը, քաղաքական և իրավական իրադարձություններն ու ընթացքը հասարակության և հանրապետության մեջ, հասարակության և հանրապետության քաղաքական համակարգի իմացու թյուն: Ներառում է հանրապետության օրենքների, Հայաստանի պետական նշանների ծանոթացում:

Էկոլոգիտահետազոտական՝ դաստիարակում է սովորողի մեջ սեր դեպի իր հայրենիքը, հարազատ հողի պատմության ուսումնասիրումը, էկոլոգիական դրսևորման ձևավորումը:

Ես և ընտանիքը՝ սովորողների դիրքորոշումը ընտանիքի՝ որպես կյանքի կարևոր արժեքի նկատմամբ: Դաստիարակել ընտանեկան հարաբերությունների կուլտուրա, ընտանեկան դրական արժեքներ

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ՝ խթանել առողջ ապրելակերպը: Այս բոլոր ուղղությունները օրգանապես փոխկապակցված են, պետք է միավորվեն պրակտիկ գործունեության ընթացքում՝ իրենց խնդիրներով, բարոյահոգեբանական և աշխարահայացքային հիմքերով, սկզբունքներով, ձևերով և հայրենասիրական դաստիարակության մեթոդներով

Արդի դպրոցին պետք է ջերմություն, հոգի: Նա պիտի լինի հայրենագիտության ամբիոն,

տաճար: Սրտի և մտքի կրակով է պետք խոսել հայրենի երկրի մասին՝ հրահրելով հայրենիքի պաշտամունքը երեխաների հոգիներում:

Դպրոցը նպաստում է աճող սերնդի քաղաքացիական և հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Նա տալիս է կայուն գիտելիքներ, որոնցով դպրոցականներըտիրապետում են ժամանակակից գիտությանը և տեխնիկային, նրանց մեջ ձևավորում է գիտական աշխարհայացք, հնարավորություն տալիս հասկանալու բնության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթներն ու պրոցեսները: Այդ դեպքում ուսումնական և արտադասարանական աշխատանքների ընթացքում երեխաների հոգում ավելի կխորանա հայրենասիրությունը, որը և կորոշի մարդու ապագա բնավորությունը՝ գիտակցական բարձր ակտիվությամբ մասնակցելու հայրենիքի պաշտպանության գործին: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից է: Այս մասին ասված է ՀՀ կառավարության կողմից մշակած «Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարություն» կոչվող օրենքի նախագծում: Օրինագծում նշվում է, որ ռազմահայրենասիրական դաստիրակության ռազմավարությունը ուղղված է ռազմահայրենասիրական դաստիրակության իրականացման կայուն զարգացման ապահովմանը՝ նպաստելով գործունյա, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը, հայոց բանակում պատանիների ծառայության նախապատրաստմանն ու պարտքի զգացումի ձևավորմանը, զինվորականի մասնագիտության հանդեպ գրավչության մեծացմանը, ազգային արժեքների գիտակցմանը, հայրենիքի հանդեպ նվիրվածության գիտակցմանը, կարգապահության ամրապնդմանը, հայրենիքը թշնամուց պաշտպանելու գիտակցմանը:

ԳԼՈՒԽ -2

Ռազմահայրենասրիական դաստիարակության հիմնախնդրի լուծման ուղիները և միջոցները նախազորակոչային տարիքում.

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման գործընթացի կայուն զարգացման ապահովումը պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ժամանակակից մարտահրավերներով: Արտաքին մարտահրավերների շարքում նշվում են պատերազմները, շրջափակումը, աշխարհում և հարևան երկրներում մոլեգնող ահաբեկչություններն ու պատերազմները, հարևան որոշ պետությունների ծավալապաշտական նկրտումները:

Որպես ներքին մարտահրավերներ ներկայացվում են՝ հայրենիքի պաշտպանությանը ոչ պատրաստակամ քաղաքացիների առկայությունը, զինվորական ծառայության և զինվորականի մասնագիտության հանդեպ գոյություն ունեցող անտարբերությունը, օտար մշակութային արժեքներին հաղորդակից լինելու տենդենցը, անկարգապահությունն ու անդաստիարակությունը, դպրոցահասակ երեխաների մոտ (հատկապես՝ ավագ դպրոցի) փողոցային արատավոր վարքագծի դրսևորումների աճը (փողոցային արատավոր բառամթերքի օգտագործումը և համապատասխան վարքագծի դրսևորումը), արտագաղթը, տնտեսության դանդաղ զարգացումը՝ պայմանավորված վերը նշված գործոններով:

Գաղտնիք չէ, որ բանակ զորակոչվող երիտասարդների մեծ մասը զինվորական ծառայության է ներկայանում անպատրաստ, ինչն այդ հարցին ոչ ճիշտ մոտեցման արդյունք է: Երեխայի մեջ դեռ մանկուց պետք է սերմանել հայրենասիրություն, համարձակություն, ռազմական ոգի, դժվարությունները հաղթահարելու կարողություններ, արժանապատվություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական խնդիրներն են՝

1. Բարձրացնել աշակերտների մարտունակ ու քաջ ոգին:
2. Ձևավորել ու զարգացնել հայրենասիրական բարձր գաղափարներ:
3. Յուրաքանչյուր աշակերտի ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը:
4 Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման գործընթացի կայուն զարգացման ապահովումը, որը պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ժամանակակից մարտահրավերներով:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը ենթադրում է նպատակաուղղված իմացական, բարոյակամային ու ֆիզիկական պատրաստակամություն հայրենիքի պաշտպանության համար, ցանկացած ագրեսորի հակահարված տալու համար, հայրենիքի ռազմատնտեսական հզորության ամրապնդման համար:

Հայրենասիրականդաստիարակության նպատակը պետք է դիտարկել ցանկացած ազգի առողջ զարգացման համար այնպիսի մի գործընթացային համակարգի մեջ, ինչպիսին է նրա անդամների ազգային սոցիալականացումը: Հայրենասիրական դաստիարակությունը չպետք է նույնացնել ռազմամոլության հետ, այլ ազգերի հանդեպ ծայրահեղ անհանդուրժողության ձևավորման հետ: Հայրենասիրությունն ու մարդասիրությունը միանգամայն համատեղելի են, միայն մարդասերը կարող է սիրել իր ազգը:

Բացարձականացնելով մարդու գաղափարը որպես մեծագույն արժեք՝ Գ. Նժդեհը նշում էր՝«Միայն մայր կոչվելու արժանին կարող է արժանաբար հայ կոչվել»: Երիտասարդության դաստիարակության գործում Նժդեհը կարևորում է դպրոցի դերը:

Նրա կարծիքով դպրոցը պետք է հանդիսանա հայրենասիրության տաճարը և դեռ այնտեղ պետք է հայ պատանին ճանաչի և սիրի հայրենի երկիրն ու ժողովրդին: Դպրոցն է, որ պատանու հոգու մեջ պետք է սերմանի մեր ատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը:

Երիտասարդների հայրենասիրության գործում կարևոր է նաև համազգային տոների դերակատարությունը: Համազգային տոները ազգային արժեքներ են սերմանում հայ երիտասարդության, ինչպես նաև ողջ հասարակության մեջ: հայրենասիրության

տաճարը և դեռ այնտեղ պետք է հայ պատանին ճանաչի և սիրի հայրենի երկիրն ու ժողովրդին: Դպրոցն է, որ պատանու հոգու մեջ պետք է սերմանի մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը: Երիտասարդների հայրենասիրության գործում կարևոր է նաև համազգային տոների դերակատարությունը: Համազգային տոները ազգային արժեքներ են սերմանում հայ երիտասարդության, ինչպես նաև ողջ հասարակության մեջ: Հանրակրթական դպրոցներն այսօր ահռելի անելիքներ ունեն ռազմահայրենասիրական դաստիակարության ուղղությամբ: Դրանցից ամենահիմնականը ռազմագիտության, ֆիզկուլտուրայի, պատմության, աշխարհագրության և գրականության դասերին մեր խնդրո առարկայի առումով նպատակաուղղված գործունեություն ծավալելն է:

Հիմնավորված է նաև, որ այսօր մեծ է տեղեկատվական, հոգեբանական պատերազմների դերը, իսկ մարտական գործողությունների ժամանակ հոգեբանական գործոնի դերը: Ստեղծվում են հոգեբանական բազմաբնույթ զենքեր, տեխնոլոգիաներ: Մեր հասարակության պայմաններում հոգեբանական գործոնով են պայմանավորված մեծ թվով աղանդավորական հոսանքների ձևավորումը, տարածումը, որոնցից շատերի գաղափարական համակարգի համար անընդունելի են զինվորական ծառայությունն ու զենքի գործածումը, ինչն էլ հակառակորդի ձեռքին կդառնա լրջագույն զենք հավանական պատերազմի դեպքում:

Ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը, հայրենիքի պաշտպանության պատրաստականության բարձր մակարդակը մեծապես պայմանավորված է նաև տնտեսական գործոնով: Նախազորակոչային տարիքի կամ նախածառայողական շրջանում գտնվող հայ պատանիների դաստիարակության խնդիրների համակարգում ռազմահայրենական դաստիարականությունը առաջնակարգ, արանձնահատուկ տեղ է զբաղեցնում՝ պայմանավորված Հայաստանի աշխարաքաղաքական իրավիճակով, դիրքով: Նախազորակոչային ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգն ունի իր բաղադրամասերը, խնդիրները, իմացական, ֆիզիկական, ռազմական, հոգեբանական: Ժամանակակից տեխնոլոգիաների, սպառազինությունների մուտքը բանակ նոր, ավելի բարձր պահանջներ են ներկայացնում զինծառայողների, զինվորների իմացական որակների,

ինտելեկտուալ կարողություններին: Այսինքն, կարևորում են զինակոչիկների կրթական մակարդակի, մտածողության ձևավորման խնդիրները: Զորակոչի արդյունքներով՝ ժամկետային ծառայության զինծառայողների 0,25%-ն ունեցել է բարձրագույն կրթություն, 60,65%-ը միջնակարգ և միջնակարգ մասնագիտական, 39,06%-ը թերի միջնակարգ,0,04%-ը բարձրակարգ անգրագետ: Նշված արդյունքները ցույց են տալիս, որ այս իմացական-կրթական ներուժը բավարար չէ նորագույն զենքն ու ռազմական տեխնիկան բարձր արդյունավետությամբ սպասարկելու համար: Նախազորակոչային տարիքի պատանիների կրթական մակարդակն ուղղակիորեն կապված է ՀՀ հանրակրթության վոլորտում տիրող իրավիճակի, երկրում առկա սոցյալտնտեսական հիմնախնդիրների, հասարակության մեջ արժեհամակարգի ընդհանուր անկման, օտարամոլության հետ: Մեծ է հանրակրթական դպրոցի դերը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարականության գործում:

Ուսումնական պլաններում ընդգրկված են առարկաներ՝ նախնական զիվորական պատրաստություն, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, երգ-երաժշտություն, վորոնց բովանդակությունը անմիջականորեն կապված է դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծման հետ: Մեծ ուշադրություն պետք է դարձնել նախնական զինվորական պատրաստությանը, որը շատ դեպքերում աշակերտների, նրանց ծնողների և հենց ուսուցիչների կողմից ընկալվում է որպես երկրորդական, ոչ պիտանի առարկա: Բավականին լուրջ խնդիր է մեր հանրապետությունում նաև համապատասխան գործիմաց մասնագետ-ուսուցիչների պահանջը, նրանց պատրաստման և վերապատրաստման խնդիրները: Պետական մակարդակով ռազմական սպարնալիքներին, ռազմական անվտանգության ապահովման հարցերին, զինված ուժերի ամրապնդման անհրաժեշտությանը, զինծառայության հեղինակության և մակարդակի բարձրացմանն ուղղված մեծ ջանքերը երբեմն քիչ են լինում, քանի որ որոշ զանգվածներ, մամուլի ներկայացուցիչներ բանակում տեղի ունեցող ցանկացած միջադեպ, պատահար, ներկայացնում են որպես ողջ բանակին, բոլոր ստորաբաժանումներին բնորոշ երևույթ,չափազանցնում են եղած բացասական երևույթների տարածվածության մասշտաբները: Եվ այդ մեկնաբանությունները էականորեն, իհարկե, բացասական ուղղվածությամբ, ազդեցություն են ունենում

հասարակական կարծիքի, հատկապես այն ընտանիքների վրա, որոնք ունեն զորակոչային տարիքի երեխաներ: Վերջիներիս մոտ ձևավորվում է որոշակի անտարբեր վերաբերմունք կարևոր սահմանադրական պարտականության՝ հայրենիքի պաշտպանության կատարման նկատմամբ:

Ինչպե՞ս վերականգնել համակարգը: Բոլոր այս խնդիրների համալիրը պահանջում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, զարգացման միտումների խորքային ուսումնասիրում և համակողմանի վերլուծություն: Մեծ նշանակություն է ձեռք բերում սկզբմունքորեն նոր մոտեցումների որոնումը և մշակումը՝ ստեղծելու համար աճող սերնդի հետ ռազմահայրենասիրական գործունեության որակապես նոր հիմքեր, որը հաշվի կառնի նրա արժեքների, պահանջմունքների և հետաքրքրությունների համակարգը: Ստեղծված իրավիճակի արմատական փոփոխության համար պահանջվում է հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիրակության արդյոընավետ համակարգի ստեղծումներառելով կոնկրետ նպատակների, խնդիրների, երկարաժամկետ ռազմավարությունների սահմանումը: այն պետք է իրականացվի սուբյեկտների առավելագույն քանակի ակտիվ մասնակցությամբ, համագործակցությամբ, ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ, վերը նշված խնդիրների նպատակաուղղված և համալիր լուծմամբ: Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ստեղծման սահմաններում անհրաժեշտ պայմանների ստեղծումը պահանջում է մեծ, անգամ նշանակալի միջոցների ներգրավվում, այդ թվում նաև ֆինանսական: Գործունեության գլխավոր դաշտը ռազմահայրենասիրական դաստիարակության սուբյեկտների գործունեության ակտիվացման և արդյունավետության բարձրացման մեխանիզմների ստեղծումն է՝ նախ և առաջ համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների, մարմինների, կազմակերպությունների: Այստեղ կարևոր է նաև հասարակական կազմակերպությունների գործունեության ուղղվածության փոփոխության ի շահ ռազմահայրենասիրական դաստիրակության: Առաջին հերթին դա վերաբերվում է տարբեր տիպի երիտասարդական միավորումներին, որոնք մեծ չափով ընդունակ են նորարարությունների, նոր, ոչ ավանդական ձևերի, միջոցների, տեխնոլոգիական

որոնմանը՝ ներգրավելով նախազորակոչային տարիքի պատանիներին ռազմահայրենասիրական ուղղվածության միջոցառումներում: Ժամանակակից հասարակությանը, աշխարհում ընդացող գործընթացների տրամաբանությանը և մեր ազգային մշակույթին, ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված իրողություններին համապատասխան ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորումը բարդ և բազմափուլ գործընթաց է: Դրա իրականացումը հնարավոր է միայն գիտականորեն հիմնավորված և իրատեսական զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա:

Վերջին տարիներին մեր հասարակության մեջ զգալիորեն ակտիվացել են ռազմահայրենասիրական դաստիրակության ուղղությամբ գործունեություն իրականացնող հասարակական, պետական, կրոնական կազմակերպությունները, առանձին անհատները, գիտակրթական կենտրոնները: Սակայն պետք է փաստենք, որ նրանց գործունեությունը համակարգված և համալիր բնույթ չի կրում ոչ կառուցվածքային, ոչ բովանդակային կողմերով: Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդրին ուղղված ծրագրերի, գործողությունների ծանրակշիռ հատվածի պատասխանատվությունը, նախաձեռնողականությունը վերձրել են ՀՀ պաշտպանության և ԿԳՄՍ նախարարությունների համապատասխան ստորաբաժանումները, Հայ առաքելական եկեղեցին: Մասնավորապես ակտիվացել է ռազմահայրենասիրական դաստիարականության ուղղության հանրակրթական դպրոցների և բուհերի աշխատանքները: Վերոնշյալ գերատեսչությունները համատեղ կազմում են ռազմահայրենասիրական դաստիարականության միջոցառումների պլան, ստորագրվում են նախարարների համատեղ հրամաններ: Այդ աշխատանքներում իրենց ներդրումն են ունենում նաև Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Ներքին գործերի նախարարությունները: Դեռահասների, պատանիների, երիտասարդների մեծամասնությունը, այդ թվում նաև բավականին ապահով ընտանիքների, չեն կարողանում իրենց անհատական առանձնահատկությունների, անձի ուղղվածությանը՝ հետաքրքրություններին, պահանջմունքներին, դիրքորոշումներին համապատասխան տեղն ու դերը գտնել հասարակության մեջ, չեն կարողանում ինքնահիրացվել, հաջող ինտեգրվել հասարակական հարաբերություններին: Դրա պատճառը սոցիալական և

հոգևոր առժեքների, կողմնորոշումների, աշխարհայացքի, մտավոր կարողությունների, անհրաժեշտ գիտելիքների բացակայությունն է, կենսագործունեության տարբեր վոլորտներում արդյունավետ գործառնելու համար անհրաժեշտ սոցիալական հմտությունների բացակայությունն է կամ դրանց ոչ բավարար զարգացվածությունը: Նշված խնդիրները անմիջականորեն բացասական կողմով ազդում են ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակության, նրա իրականացման արդյունավետության վրա: Ռազմահայրենասիրական դաստիարակության կայուն համակարգի ձևավորումն ու զարգացման, կատարելագործման անընդհատության ապահովումը հնարավորություն կտա նրանում ընդգրկել պատանիների, երիտասարդների տարբեր խմբերի, նույնիսկ ռիսկային համարվող խմբերի, շոշափելի դարձնելով համակարգի արդյունավետությունը: Ավելին, ռազմահայրենասիրական դաստիրակության կայուն համակարգի առկայությունը կնպաստի նաև պատանիների, երիտասարդների հաջող սոցիալականացմանը, սոցիալական, հասարակական ակտիվության խթանմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու զարգացմանը: Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդրի լուծումն ու համապատասխան գործուն համակարգի ստողծումն ենթադրում է կոպետենտ կառավարման մարմնի ստեղծում, որը կմշակի և ռազմավարությունը, և մեթոդաբանությունը, համապատասխան հայեցակարգերը և առանձին ուղղությունների և մեխանիզմների մշակման, դրանց ներդրման ընթացակարգերը, այդ բնագավառում տեղեկատվական-վերլուծական, գիտական-մեթոդական: Այս օղակը պետք է ունենա որոշակի լիազորություններ, իրավունքներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգի ձևավորումն ու ակտիվ գործունեությունը կապահովեն դպրոցականների այնպիսի սոցիալական կարևոր որակների ձևավորումն ու զարգացումն, ինչպիսիք են բարձր պատասխանատվությունը, քաղաքացիական հասունությունը, հայրենիքի և ազգի նկատմամբ սերը, պարտքի զգացումը, ազգային ավանդույթների, մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը, ավելի կմեծանա գործունեության տարբեր ոլորտներում հասարակության կարևոր խնդիրների լուծման գործում նրանց ակտիվ մասնակցության հնարավորությունը: Երեխաների և դեռահասների վերոնշյալ որակական հատկանիշների ձևավորումը, բնականաբար,

ուղղակիորեն կնպաստի հասարակական հարաբերությունների բովանդակության դրական փոփոխությանը, մարդասիրությանը, բարոյական, ազգային և համամարդկային բարձր արժեքների, դրանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը:

Երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման հայեցակարգի ստեղծումը և գործնականում ներդնումը անմիջականորեն պայմանավորում է զինվորական ծառայությանը՝ նախազորակոչային տարիքի պատանիների պատրաստության մակարդակի բարձրացումը: Ժամանակակից դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետ գործառնությունը հնարավոր է ամբողջական մանկավարժական գործընթացում:

Այսպիսով, աշակերտների ռազմահայրենասիրության ամրապնդման գործում մեծդեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել: Հայրենասիրության դասերը աշակերտի անձի ինքնահաստատման, կայացման, բարոյական արժեքների ձևավորման, պատշաճ վարվեցողության, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետագայում զինված ուժերում ծառայելու նախապայման են հանդիսանում:

Հայրենասիրական աշխատանքը ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մերօրյա հերոսների, կամավորական ջոկատների հետև այլն: Արդյունավետ են նաև սպորտային միջոցառումները, մրցակցային խաղերը, իսկ մարտական փառքի վայրերով արշավները ձևավորում են հարգանք ավագ սերնդի նկատմամբ և ամրապնդում նրանց գործի շարունակականությունը: Կարևորվում է զինղեկի համագործակցությունը հայոց լեզվի և պատմության ուսուցիչների հետ՝ առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն իրադարձությունները, մեր ազգի հերոսների գործունեությունը՝ կազմակերպելով այցելություններ պատմական հիշարժան վայրեր, հուշարձանների մոտ՝ ներկայացնելով հերոսների անցած փառավոր ուղին, ծաղիկներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով:

Յուրաքանչյուր աշակերտի պետք է ներշնչել իր կատարած գործի կարևորության ու

նշանակալիության մասին համոզմունքը: Հայ զինվորը պետք է հպարտությամբ հիշի, որ ինքն ու իր ընկերները հաջողությամբ են պահպանելու հայրենիքի խաղաղությունն ու անդորրը: Դպրոցներում զինղեկներ խնդիրներից է՝ ավարտական դասարաններում հոգեբանորեն նախապատրաստել տղաներին զինվորական ծառայությանը, որպեսզի նրանք պատրաստ լինեն զինվորական երդմանը, անձնուրաց կերպով և արիաբար ծառայելուն, պաշտպանելու իրենց հայրենիքը, կատարելու զինվորական պարտքը՝ անմռունչ տանելով զինվորական ծառայության դժվարությունները: Զինղեկը պետք է ներշնչի ապագա զինծառայողներին խորապես հավատալու իրենց անձնական երդմանը, հավատալու, որայն չափազանց կարևոր է ընդհանուր գործի հաջողության համար: Անհրաժեշտ է դրական գծեր և ազնիվ սկզբունքներ ձևավորել աշակերտների մեջ, ինչպես նաև աշխատանքներ կատարել բացասական երևույթների դեմ պայքարի ուղղությամբ:

Ժամանակակից հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական ուղիներն են՝

1. Աշակերտների համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտը զգա բանակի շունչը, զանազան միջոցներով պետք է ապահովել այս մթնոլորտը, օրինակ հայրենասիրական թեմաներով տարբեր քննարկումներ կազմակերպել այս նոր պատերազմի կենդանի հերոսների հետ, որի ժամանակ աշակերտներին հերոսական դրվագներից կպատմեն և կոգևորեն աշակերտներին:
2. Անհրաժեշտ է կազմակերպել մրցույթներ ֆիզիկական պատրաստվածության շրջանակներում, քանի որ երբ աշակերտները մրցելու հնարավորություն են ունենում, նրանց մոտ ավելիին ձգտելու, հաղթելու, առաջինը լինելու մղումներ են արթնանում, որն էլ մարտական ոգու գրավականն է:
3. Ֆիզիկական պատրաստվածության շրջանակներում մրցույթներ կազմակերպելուց բացի անհրաժեշտ է կազմակերպել նաև տրամաբանական-ինտելեկտուալ խաղեր՝ աշակերտներին գիտելիքներով զինելու նպատակով:
4. ՆԶՊ դասընթացների արդյունավետության հիմնական երաշխիքը դասավանդող մասնագետներն են, որոնք համապատասխան գիտելիքներ ու փորձ ունենալու դեպքում կարող են ապահովել մեր վաղվա սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր մակարդակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցականների քաղաքացիության, հայրենասիրության, հայրենիքին պատվով ծառայելու պատրաստակամության զարգացման մանկավարժական հիմունքների մշակման ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել և հնարավորության պայմաններում ներդնել հայկական և արտերկրի փորձը: Համակարգը պետք է նպատակաուղղված լինի ոչ միայն ընդհանուր երիտասարդությանը, այլ նաև յուրաքանչյուր առանձին պատանու, երիտասարդի՝ որպես քաղաքացու և հայրենասերի կայացմանը և զարգացմանը, ապահովվի ռազմավարական ծրագրով նախագծված նպատակի ձեռքբերմանը: Միայն համալիր միջոցառումների և գործուն համակարգի առկայության դեպքում հնարավոր կլինի լուծել ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները:Իրականացված հետազոտությունները թույլ տվեցին հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Նախազորակոչային պատրաստության ուսուցիչներին մանկավարժահոգեբանական գիտելիքներ հաղորդելը, կարողությունների և հմտությունների ձևավորումը բարձրացնել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, քանի որ միայն ռազմագիտական գիտելիքներին տիրապետելը չի ապահովում ցանկալի արդյունք:

2. Դպրոցականների մոտ բանակում ծառայությանը պատրաստ չլինելը անմիջականորեն ազդում է զորակոչվելուց հետո զինված ուժերի ստորաբաժանումներում նրանց ծառայության որակի վրա:

3. ՀՀ երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման ու իրականացման հայացակարգի ստեղծումը և գործնականում ներդրումը անմիջականորեն պայմանավորված է զինվորական ծառայությանը՝ նախազորակոչային տարիքի պատանիների պատրաստության մակարդակի բարձրացումը:

4. Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ հանրակրթական դպրոցներում ռազմահայրնասիրական դաստիարակության խնդիրների շարքում անտեսվում է իրավագիտակցության ձևավորումը, ինչը հետագայում անմիջականորեն

հանգեցնում է զինվորական ծառայության ընթացքում իրավախախտումների դրսևորումներին:

5. Ժամանակակից դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետ գործառնությունը հնարավորե ամբողջական մանկավարժական գործնթացում:

6. Դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է հստակեցնել բոլոր սուբյեկտների պարտականությունները ու գործառույթները այդ ուղղությամբ և մշակել այդ աշխատանքի որակի գնահատման չափանիշներ ու մեխանիզմներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Ա. Մուրադյան << Ռազմահայրենասիրական դաստիարակության իրացման հիմնական ուղղությունները հանրակրթական դպրոցում >> 2010թ էջ 403-406
2. Վ. Ա. Մուրադյան << Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը հանրակրդական դպրոցում>> 2011թ էջ 416-419
3. Վ. Ա. Մուրադյան << ՀՀ քաղաքացիների ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգի ստեղծման անհրաժեշտությունը >> 2013թ էջ 99-101
4. Վ. Ա. Մուրադյան << Նախազորակոչային տարիքի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման ուղղիներն ու միջոցները >> 2014թ էջ 248-252
5. ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգը
6. ՀՀ ռազմական դոկտրինը
7. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը
8. Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006:
9. Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, 2002, էջ 46: